ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

21 հոկտեմբերի 2013 թվականի N 96-Ա

ԹԱԴԵՎՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի <<Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին>> № 436-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի <<դ>> ենթակետով և 14-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 17-ի № 01/13/5/3349-13 գրության՝ **կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի (ծածկագիր՝ 68-2.1-1) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Թադևոս Ղազարյանի հետ 2013 թվականի հոկտեմբերի 22-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր մինչև քաղաքացիական ծառայության օրենսդրությամբ նախատեսված ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Վ. ՀԱԿՈԲՅԱՆ*

2013թ. հոկտեմբերի 21
ք. Կապան